

## ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իսկզբանե մարդն օգտվել է բնությունից, օգտագործել է բնության ուժերն ու բարիքները հանուն իր գոյատևման ու բարօրության:

Բնօգտագործում է կոչվում ընդհանրապես բնական ռեսուրսների և բնական պայմանների օգտագործումը մարդու կողմից:

Բնօգտագործումը կարող է լինել ոչ ռացիոնալ և ռացիոնալ: Բնօգտագործումը համարվում է ոչ ռացիոնալ, եթե բնական ռեսուրսը և դրա օգտակար հատկությունները օգտագործվում են ոչ լրիվ չափով, և այդ ընթացքում էական վնաս է հասցվում միջավայրին, խախտվում է երկրահամակարգերի բնական հավասարակշռությունը:

Հակառակ դրան, ռացիոնալ բնօգտագործման դեպքում բնական ռեսուրսը (անտառը, հանքանյութը, գետի ջուրը և այլն) և դրա օգտակար հատկությունները օգտագործվում են անմնացորդ, և միաժամանակ նվազագույն վնաս է հասցվում բնական միջավայրին:

Մարդը բնությունն օգտագործում է աշխատանք կատարելու միջոցով, այսինքն՝ շրջակա բնության հետ մտնելով որոշակի հարաբերությունների մեջ: Մարդու աշխատանքային գործունեությունը բաղկացած է 3 տարրից, ա) մարդու նպատակահարմար գործունեություն կամ բուն աշխատանք, բ)

աշխատանքի առարկա, որի վրա մարդը ներգործում է, գ) աշխատանքի միջոց (գործիքներ, մեքենաներ), որոնցով մարդը ներգործում է աշխատանքի առարկայի վրա:

Բայց դա ի՞նչ առնչություն ունի բնօգտագործման հետ: Աշխատանքի պրոցեսի վերջին երկու տարրերը, այսինքն՝ աշխատանքի առարկաներն ու միջոցները, մարդուն շրջապատող բնության տարրերն ու երևույթներն են: Դրանք են՝ փայտը, քարածուխը, այրվող բնական գազը, հողը, ջուրը, քամին, արեգակնային ջերմությունը, բնության այն բոլոր առարկաներն ու երևույթները, որոնցից մարդն օգտվում է աշխատանքի պրոցեսում: Արտադրամիջոցները, ի վերջո, բնության տարրերն ու երևույթներն են իրենց նախնական կամ վերափոխված վիճակով:

Բնության այն տարրերը, որոնք դեռ չեն օգտագործվել մարդու կողմից և չեն վախել իրենց նախնական վիճակը, ինչպես օրինակ, անտառում աճող ծառի փայտանյութը, երկրի ընդերքում գտնվող քարածուխը, տուֆաքարը, նավթը կամ չմշակվող հողը, գետում հոսող ջուրը, կոչվում են ***աշխատանքի առաջնային առարկաներ:***

Երբ բնության այդ տարրերն արդեն ընդգրկված են արտադրության ոլորտ, երբ ծառն արդեն հատվել ու սղոցվել է, երբ տուֆի բեկորը հանքից հանվել է, տաշվել ու դարձել պատրաստի որմնաքար, երկաթաքարը ձուլվել է և դարձել պողպատ, հոսող ջուրը սկսել է էլեկտրաէներգիա արտադրել կամ ջրել դաշտը, հողը մշակվել է ու բերք է տալիս, դառնում են ***աշխատանքի երկրորդային առարկաներ:***

Արտադրության պրոցեսում շարունակվում է բնական միջավայրից կորցված ու աշխատանքի երկրորդային առարկաներ

դարձած նյութերի մշակումն ու վերամշակումը: Մետաղից պատրաստում են մուրճ, մեխ, հաստոց և ներքին այրման շարժիչ, տրակտոր և էլեկտրական գեներատոր, ԶրէԿ-ներում ու ԶԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան հաղորդում են հեռավոր տարածություններ և օգտագործում: Տարբեր երկրորդային առարկաներից ստանում են բարդ համակարգիչներ և աշխատանքի այլ բացում միջոցներ:

Մարդկային հասարակության զարգացմանը զուգընթաց մեծանում է մարդու ներգործությունը շրջակա բնական միջավայրի վրա, ***ուժեղանում է հասարակության և բնական միջավայրի միջև կատարվող նյութափոխանակությունը:***

Բնական միջավայրի վրա մարդու ներգործության ուժեղացումը, ինչպես հիշատակվել է վերևում, ունենում է երկու կարևոր բացասական հետևանք: